

Այդ ամենը չի նշանակում, թե սովետական դեմոկրատիայի սկզբունքների պրակտիկ իրականացման գործում մեղանում թերութիւններ չկան, թե մեր պետական ապարատը անբասիր է աշխատում: Պարտիան իրեն չի խաբում այդ բանում:

Վերջին տարիներս մեծ աշխատանք է կատարված վարչա-կառավարչական ապարատի կրճատման և էտանացման ուղղութիւնով, միութենական ռեսպուբլիկաների և տեղական սովետական օրգանների իրավունքների շեղումն ուղղութիւնով, շափից ավելի կենտրոնացումը, մանավանդ գյուղատնտեսութեան պլանավորման ասպարեզում եղած կենտրոնացումը վերացնելու ուղղութիւնով: Սակայն մեր պետական ապարատը դեռևս վիթխարի է, ապարատի աշխատողների մեջ կան այնպիսի մարդիկ, որոնք թույլ են տալիս բյուրոկրատիզմ ու քաշքշուկի դեմ, որոնք կարգված են կենդանի գործից, ժողովրդից, որոնք թղթից բացի ոչինչ և ոչ ոքի չեն տեսնում:

Անհրաժեշտ է անդու կերպով կատարելագործել պետական ապարատի աշխատանքը, Սովետների աշխատանքը խարսխել բոլոր դեպուտատների ակտիվ մասնակցութեան և ընտրողների հետ նրանց սերտ կապի վրա, անխնա կերպով պայքարել բյուրոկրատիզմի ու քաշքշուկի դեմ, գտնել նոր ձևեր և նոր կանաչներ աշխատավորների ստեղծագործական նախաձեռնութեան հետագա զարգացման համար, ձեռնարկութիւնների ու տնտեսական կազմակերպութիւնների ղեկավարման անմիջական աշխատանքին բանավորների, ինժեներների և ծառայողների է՛լ ավելի գործուցնել մասնակցութեան համար: Հարկավոր է նաև ամեն կերպ զարգացնել և ամրապնդել կոլտնտեսային դեմոկրատիան գյուղում, ամենուրեք ապահովել Գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան խստիվ կատարումը և վերացնել տեղական կազմակերպութիւնների կողմից կոլտնտեսութիւնների նկատմամբ բռնախնդիր խնամակալութիւնը:

Կոմունիստական պարտիայի քսաներորդ համագումարից հետո ավելի ու ավելի է աճում աշխատավորների ակտիվութիւնը, նրանց ջերմ շահագրգռվածութիւնը պետութեան բոլոր գործերում: Լիակատար չափով սկսում են դրսևորվել անհատի պաշտամունքի հետևանքների հաղթահարման դրական արդյունքները:

Անհատի պաշտամունքը, ինչպես հայտնի է, կասկած է Ի. Վ. Ստալինի անվան հետ: Հանրահայտ են Ստալինի ծառայութիւններն ու դերը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, սոցիալիստական շինարարութեան գործում և բանվոր դասակարգի թշնամիների դեմ մղված պայքարում: Ստալինը խոշոր կազմակերպիչ էր, խոշոր մարքսիստ: Բայց Ստալինի անձնավորութեան պաշտամունքը ծնունդ տվեց լուրջ սխալների և սոցիալիստական օրինականութեան խախտման բազմաթիվ փաստե-

րի: Անհատի պաշտամունքը խորթ է մարքսիզմ-լենինիզմին, անհամատեղելի է սոցիալիստական հասարակական կարգի հետ, ուստի և վճռաբար դատապարտվեց մեր պարտիայի կողմից:

Այժմ, երբ վերահաստատվում են պարտիական կյանքի լենինյան նորմաները և սովետական սոցիալիստական դեմոկրատիայի սկզբունքները, երբ պարտիայում իրականացվում է կոլեկտիվ ղեկավարութիւն, անշեղորեն աճում է պարտիական մասսաների և ամբողջ սովետական ժողովրդի ստեղծագործական ակտիվութիւնը, զգալիորեն աշխուժացել է պարտիական ու սովետական աշխատանքը, պարտիական և անպարտիական աշխատողներն սկսել են ավելի համարձակորեն քննադատել թերութիւնները և ավելի ակտիվորեն պայքարել թերութիւնների դեմ: Ամբողջ սովետական ժողովուրդը է՛լ ավելի սերտորեն է համախմբվում իր հարազատ Կոմունիստական պարտիայի շուրջը: (Երկարատև ծափահարութիւններ):

Պարտիայի հրատապ խնդիրն է աշխատավորների հետ սերտ կապերի հետագա ամրապնդումը: Պարտիական ու սովետական աշխատողներից, բոլոր կոմունիստներից պարտիան պահանջում է, որ նրանք իրենց հիմնական ուղադրութիւնը և ուժերը կենտրոնացնեն կոնկրետ, կենդանի գործի վրա, որ նրանք գտնվեն բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի կյանքի բուն կենտրոնում, որոնք պատմութեան իսկական կերտողներն են, կոմունիզմի իսկական կառուցողները:

Ժողովրդի հետ սերտ, անխզելի կապի ամրապնդումը մեր պարտիան համարում է մեր սոցիալիստական պետութեան հետագա ամրապնդման և դեպի կոմունիզմ հաջող առաջընթացի կարևորագույն պայմանը:

Սովետական ժողովրդի միասնութիւնը սոցիալիզմի մեծագույն նվաճումն է: Հասարակական զարգացման ամբողջ ընթացքը հաստատում է կենինի այն խոսքերի ճշտութիւնը, որ մասնավոր սեփականութիւնը անջատում, իսկ սոցիալիզմը միավորում է: Սովետական Միութիւնում ամուր կերպով հաստատվել են բանվորների, ինտելիգենցիայի, կոլտնտեսային գյուղացիութեան եղբայրական բարեկամութիւն ու համագործակցութիւն, մեր երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամութիւն ու համագործակցութիւն:

Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ մեր ժողովուրդը, որը լի է վստահութեամբ իր անսահման ուժերի նկատմամբ, ընթանում է կոմունիզմի ուղիով: Մարքսիզմ-լենինիզմի անմահ գաղափարները մեզ զինում են կոմունիստական շինարարութեան ուղիների ու միջոցների իմացութեամբ, բազմապատկում են մեր ուժերը, անսասան վստահութիւն են ներշնչում մեր գործի վերջնական հաղթանակի նկատմամբ: (Երկարատև ծափահարութիւններ):

IV

Ընկերներ՝ Անցած տարի միջազգային իրադարձութիւնները, հակառակ ագրեսիվ ուժերի հակազդեցու-

ների եռանդուն գործողութիւններ են հարկավոր Եգիպտոսի բնակչութեան ազատութիւնն ու կյանքը առա-